

HIC BEATAM AETERNITATEM EXPECTAT —
 CANTO PATRI AC PASTORI . . .² —
 CONGREGATIO ARMENORUM
 PONI CURAVIT.

Սոյն լատին տապանագիրը, որ տող առ տող ընդօրինակուած՝ եւ տպուած է, գրաբար թարգմանելով կը դնեմ՝ Աստ Տանգոյց զմահականացուն մինչեւ յարիցէ անմահ — Յովհաննէս Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսի — Որ ի մէջ արիւնարբու սպառնալեաց բարբարոսաց, Հայր, Հովիւ, Ուսուցիչ, — Զժողովուրդն, զՀօտն, զԵկեղեցին — Վարեաց, արածեաց, ուսոյց — Բանիւ եւ գործով. — Որ, զի մի ի զուր ինչ ընթանայցէ կամ ընթացեալ իցէ, — Կման Պաւղոսի, Յաջորդին Պետրոսի — ԶՀաւատսն դաւանել կամեցաւ ի նմին իսկ . . . (Կենդրոնի¹) Հաւատոց ի Հռոմ — Առաջի վերին վարչին իսկ հաւատոց — Ուրբանոսի Ութերորդի — Յորմէ զմխիթարութիւն այնչափ ճգանցն եգիտ. — Առաւել քան զութանամենիք փոխեալ — Աստէն երանալից յաւիտենականութեան ակն ունի: — Անձկալի Հօրն եւ Հովուին . . . — Միաբանութիւնն Հայոց — Կանգնել խնամ կալաւ:

¹ Հոս անիմաստ. թերեւս Caro, Candido ?

² Անընթեռնի: